ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«29» 04 2010
N 28-Ա.
օր.N

«29» 04 2010
N
օր. N

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

[redacted] և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն, ի կատարումն ՀՀ կառավարության 1997թ դեկտեմբերի 30-ի N 627 ԿԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություն (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը վճարում է այդ Ծառայության դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2010թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը չի կատարում Ծառայության դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 30.12.97թ թիվ 627 կգ որոշման: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը (ՀՀ դրամ)
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ. ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	ընդամենը	325 000	325 000
4.	ԱԱՀ 20%		65 000
5.	ընդամենը տարեկան վարձը		390 000 (երեք հարյուր իննսուն հազար դրամ)

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումն՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ Գ. Հակոբյան

ք.Երևան, Գրիգոր Լուսավորչի 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ. գանձապետական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հ/հ 90001000[illegible]
հվհհ 01[illegible]079

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ

_____ Ս.Մնացականյան

ք. Երևան, Կառավարության 3շենք
ՀՀ Ֆին. նախ.գանձապետական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 90001000[illegible]
հվհհ 02507509

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____
հեռախոս՝ 1-99,

գր N12/659
070510